ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	• «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ • Վահրամ Սողոմոնյան • masnakcayindproc@gmail.com • +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Փոխներգործուն մեթոդների կիրառումը 8-րդ դասարանում՝ «Մարդը և շրջակա աշխարհը» թեմայի շրջանակներում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	• Հայկանուշ Այվազյան Արայիկի • Պատմաբան և ուսուցչուհի • 091-828-717 • ayvazyanhaykushik@gmail.com • Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն, Հասարակագիտություն,Իմ հայրենիքը • V,VI,VII,VIII,IX
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	• Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոց,Այգեստան 53 • 0255-2-24-88 • spitak4@schools.am • Spitak4.schoolsite.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն	էջ 1
Ներածություն	էջ 2-6
Հիմնական բովանդակություն	էջ 6-14
Եզրակացություններ, առաջարկություններ	էջ 14-17
Օգտագործված գրականության ցանկ	էջ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակը եւ հետազոտական հարցը	Որքանէլորաշխարհիզարգանա, կրթությունը շարունակումէմնալառաջնայինգործոն:Որպեսզիկրթությունը դառնաարդյունավետևհետաքրքիրոլորտ, հարկավորէկիրառելզանազանմեթոդներ,հնարներ:Այսօրվապահանջներիցելնելովանհրաժեշտությունէառաջանումուսուցումը դարձնելաշակերտակենտրոնևհամագործակցային:Ուսուցիչը պետքէանիամենհնարավորբան, որտվածգիտելիքը հասանելիլինհաշակերտին, իսկարդյունքումզարգացնիսովորողիքննադատական, ստեղծագործականմտածողությունը, ինչպեսնաևձևավորիկյանքինկատմամբակտիվվերաբերմունքունեցողքաղաքացի: «Հասարակագիտություն» առարկայիդասավանդումը հնարավորությունէտալիսուսուցչինդասապրոցեսիընթացքումկիրառելզանազան մոտեցումներևվարելանչափհետաքրքիրևբազմաբովանդակդասերիընթացք:Դասապրոցեսիարդյունավետանցկացմանը նպաստումենևնաևզանազանփոխներգործունմեթոդներիկիրառումը:Հասարակագիտությունառարկայիդասավանդմանշրջանակներումուսուցանվողթեմաները անչափհետաքրքիրևբազմաբովանդակեն:Սովորողները մեծհետաքրքրությամբենմասնակցումդասապրոցեսին ` ցուցաբերելովնաևակտիվություն:Զանազանհասարակականթեմաներիուսումնասիրությանընթացքումաշակերտը տեղափոխվումէայնպիսիմիջավայր,որտեղկարողանումէհանդեսգալսեփականմտքերով, քննադատականմտածողություններով, վերլուծականկարողություններով:

	Յուրաքանչյուրթեմադասավնդելուցառաջուսուցիչըպետքէպլանավորիդասիընթացքը, հասկանա, թեինչմեթոդներկիրառի, ինչպեսբացատրինյութը, ինչաղբյուրներիցկարողենօգտվելսովորողները, ինչպիսիգնահատումպետքէկատարվիևայլն: Նախապեսպլանավորվածաշխատանքըտալիսէնաևիրդրականարդյունքը:Հմուտուսուցիչըկարողէկիրառելզանազանմեթոդներ,հնարներ,որոնքէլավելիարդյունավետաշխատանքկապահովեն:Սակայնցանկացածմեթոդկիրառելիսուսուցիչըպետքէհաշվիառնիաշակերտների տարիքայինխումբը, նրանցառանձնահատկությունները,կարողությունները ևայլն:Ճատհաճախսովորողներըգիտելիքըկապումենմ եթոդիհետևամբողջկյանքումայնշատլավտպավորվում էևչիմոռացվում:Մեթոդներըկարողենլինելոչմիայնուսուցողական, այլնաևաշակերտիմոտկզարգացնենբազմաթիվկարողություններևհմտություններ: Հետազոտականաշխատանքիթեմաընտրվեցիհետեւյալ թեման՝ «Փոխներգործունմեթոդներիկիրառումը 8-րդդասրանում«Մարդըևշրջակաաշխարհը» թեմայիշրջանակում»: Հետազոտականաշխատանքիկարևորագույնպատակ նէհասնելիհետազոտականհարցի «Արդյո՞քկիրառելիևարդյունավետմիջոցներենփոխներգործունմեթոդներըհասարակագիտությունառարկայիշրջանակներում, 8-րդդասարանիօրինակը» պատասխանի: Մինչհետազոտականաշխատանքըկատարելը՝ հստակ եցվեցինայնբոլորնպատակներնուխնդիրները, որոնքկապվածենաշխատանքիհետ, օրինակ՝ ● հասկանալ, թեի՞նչէիրենիցներկայացնում «փոխներգործունմեթոդ» ասվածը:

	• փոխներգործունի՞նչմեթոդներգոյությունունեն • արդյո՞քկիրառելիենփոխներգործունմեթոդները պատասխանին «Հասարակագիտություն» առարկայիդասավանդմանշրջանակում • փոխներգործունմեթոդներիմիջոցովփոխանցելգիտելիքիբարձրմակարդակ, ձևավորելմիշարքիմտություններևկարողություններ • սովորողինտալինարավորությունինքնահաստատվելու, ակտիվությունդրսևորելու • փոխներգործունմեթոդներիկիրառմանժամանակստեղծելիամագործակցայինմթնոլորտևայլն
Ո՞ր առանցքային կոմպետենցիայի ն/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Հետազոտվող թեմայի շրջանակներում կիրառվող փոխներգործուն մեթոդները օգնում են զարգացնել սովորել սովորելու կարողությունը, քանի որ ուսումնառության ընթացքում ձևավորվում է քննադատական մտածողություն, ի հայտ են գալիս ստեղծարար ունակություններ, ինչպես նաև սովորողները գնահատում են ինչպես սեփական, այնպես էլ միմյանց ֆիզիկահոգեբանական հնարավորությունները: Հասարակագիտություն առարկայի դասավանդման շրջանակում կիրառվող փոխներգործուն մեթոդները օգնում են զարգացնել նաև ինքնաճանաչողական կոմպետենցիան, որի միջոցով սովորողների մոտ մեծանում է հարգանքի,ազնվության, պատասխանատվության զգացումը:

	Փոխներգործուն մեթոդները զարգացնում են նաև մշակութային և մեդիա կոմպետենցիաները, երբ դասավանդվող նյութի հետ կապված դիտարկումներ, որոնումներ ու բացահայտումներ են կատարվում: Իհարկե, մեթոդների կիրառումը զարգացնում է նաև այլ կոմպետենցիաները, որոնք բոլորը ուղղված են սովորողի գիտելիքի, կարողությունների, հմտությունների, դիրքորոշման, արժեքների ձևավորմանը :
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Հետազոտական աշխատանքի համար որպես թիրախային խումբ ընտրվեց 8-րդ դասարանը, որտեղ սովորում է 13 աշակերտ, որից 5 տղա, 8 աղջիկ: Դասավանդվող թեման «Մարդը և շրջակա աշխարհը» մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին կիրառել զանազան մեթոդներ, հնարներ, և մոտեցումներ, որոնց արդյունքում էլ սովորողները կստանան գիտելիք, ձեռք կբերեն մի շարք հմտություններ, կարողություններ, կձևավորեն արժեք և դիրքորոշում : Թեման ունի կրթադաստիարակչական նշանակություն և արդեն 8-րդ դասարանում սովորողների կողմից բազմաթիվ գաղափարներ, տերմիններ, երևույթներ ընկալելի են:

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Որպես մեթոդ ընտրվել է քանակական մեթոդը, մասնակից են 13 աշակերտ՝ 5տղա,8 աղջիկ: Կիրառվել են հարցաթերթիկներ և այլն;
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	04.09.2023-14.09.2023

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից,	փոխներգործուն բառը նշանակում է փոխազդել, իսկ փոխներգործուն մեթոդների կիրառման ժամանակ սովորողները ոչ թե ստանում են միայն պատրաստի գիտելիքներ, այլ նաև ձեռք են բերում զանազան գիտելիքներ, որոնք հենց իրենք են ձևավորում ինքնուրույն աշխատանքներ կատարելիս, ձևավորում են բազմաթիվ կարողություններ,

տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	հմտություններ և այլն : Փոխներգործուն մեթոդները ավելի արդյունավետ են դառնում, երբ դրանք կիրառվում եմ ավանդական դասին զուգահեռ: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառել չափորոշչային պահանջներից ելնելով: Փոխներգործուն մեթոդները կիրառելու ժամանակ դասապրոցեսին մասնակից են լինում դասարանի բոլոր աշակերտները, իսկ այդ դեպքում դասապրոցեսը ավելի հետաքրքիր ու արդյունավետ է դառնում: Փոխներգործուն մեթոդները օգնում են սովորողի մոտ զարգացնել երևակայությունը, ինքնուրույնությունը և այլն: Փոխներգործուն մեթոդները կիրառվում են մի քանի սկզբունքներից ելնելով, օրինակ՝ ● աշխատասիրություն, ընկերասիրություն ● նախաձեռնողականություն, համագործակցու-թյուն ● ակտիվություն, ինքնարտահայտում ● հավասարություն, փոխադարձ հարգանք ● հետադարձ կապ և այլն Փոխներգործուն մեթոդներ կիրառելիս սովորողները սկսում են համագործակցել միմյանց հետ և, եթե խնդիրներ են առաջանում, փորձում հաղթահարել միմյանց օգնելով, իսկ անհնարինության դեպքում դիմում են ուսուցչի օգնությանը: Փոխներգործուն մեթոդները աշակերտակենտրոն են : Փոխներգործուն մեթոդները կարելի է կիրառել և՛ խմբային, և՛ անհատական տարբերակներով: Կան զանազան փոխներգործուն մեթոդներ, սակայն ուսուցիչը ևս կարող է լինել նախաձեռնող և ինքն էլ

	մտածի նոր և ավելի արդյունավետ մեթոդներ: Առկա մեթոդներից են՝ԳՈՒՍ, Պրիզմա, Վենի դիագրամ, մտագրոհ, բանավեճ,խաղեր, զույգերով աշխատանք, մտքերի տարափ, վերլուծություն և այլն: Փոխներգործուն մեթոդների կիրառումը առավել արդյունավետ է դառնում, երբ դրանք կիրառվում են ավանդական դասին զուգահեռ: ● հետաքրքիր փոխներգործուն մեթոդ է խճանկարի մեթոդը, երբ մինչ դասի նյութը հաղորդելը սովորողները փորձում են որոշակի տեղեկատվություն հավաքել և ապա բուն նյութի հետ կապված գիտելիքը ստանալուց հետո կատարում են ամփոփում: ● մեկ այլ մեթոդ է բանավեճի մեթոդը: Հասարակագիտություն առարկայի շրջանակներում կարելի է կազմակերպել բազմաթիվ բանավեճեր , քանի որ թեմաները բազմաբովանդակ են և կարող են բանավեճի բազմաթիվ պահեր ստեղծել: Բանավեճի շուրջ կարելի է կազմակերպել քննարկումներ հայտնել կարծիքներ, կատարել եզրահանգումներ: ● մեկ այլ մեթոդ է պրիզմայի մեթոդը ,որը կարելի է կիրառել դասապրոցեսի խթանման փուլում: Մտագրոհի ժամանակ կատարվում է վերլուծություններ, տրվում գնահատականներ զանազան թեմաների շուրջ և այլն: ● Վենի դիագրամի մեթոդի միջոցով սովորողները կարողանում են հակադրել մի քանի գաղափարներ, մտքեր,ինչպես նաև գտնել ընդհանրություններ:

- կիրառելի է նաև ԳՈՒՍ մեթոդը, երբ սովորողը թեմայի յուրացման ավարտին լրացնում է աղյուսակ

Թեմայի անվանում		
Ի՞նչ գիտեի	Ի՞նչ սովորեցի	Ի՞նչն էր անհասկանալի

- լավագույն մեթոդներից է խաղերի մեթոդը, հատկապես դերային խաղերը: Սովորողները ակտիվ են, հետաքրքրված, երբ կիրառվում են զանազան խաղեր:
- Տ-աձև աղյուսակի մեթոդը

Դրական կողմեր+	Բացասական կողմեր-

Այս մեթոդի ժամանակ սովորողները աղյուսակի մեջ նշում են որևէ երևույթի, գաղափարի դրական և բացասական կողմերը:

- կռահման մեթոդի ժամանակ սովորողներին հաղորդվող նյութը իսկզբանե հայտնի չի լինում, իսկ ուսուցիչը օգտագործելով նրանց գիտելիքների պաշարը և մտածողությունը, փորձում է սովորողների ջանքերի միջոցով պարզաբանել նյութը:
- պրիզմայի մեթոդը ևս հարմար է կիրառել հասարակագիտության ժամերին, օրինակ վերցնենք«խմբեր,շերտեր,համայնք-ներ» թեման, օրինակը՝





- տեսանյութերի և ֆիլմերի դիտում: Թեմայի հետ կապված որևէ տեսանյութի և ֆիլմի դիտումից հետո կարելի է կատարել քննարկումներ: Շատ կարևոր է, որ տեսանյութերը սերտ կապ ունենան դասավանդվող նյութերի հետ:
- կիրառելի մեթոդ է նաև փոխադարձ դասավանդման մեթոդը, երբ սովորողները փոխադարձաբար ստանձնում են ուսուցչի դերը:
- դիդակտիկ խաղերի կիրառման ժամանակ զարգանում է նաև սովորողների տրամադրությունը, օրինակ « օդապարիկ» խաղի ժամանակ, դասի նյութը յուրացնելուց հետո պատրաստում են պաստառ, որի վրա նկարված է օդապարիկ: Օդապարիկը բարձրացնելիս դժվարություն է ունենում կապված ծանր բեռի հետ և հետևաբար կարիք էլ առաջանում մի քանիսը նետել ցած: Օդապարիկի մեջ նախապես սովորողները փակցրել էին թեմային համապատասխանող մտքեր: Դեն նետելով հետո օդապարիկի մեջ մնում են միայն թեմայի հետ կապ ունեցող կարևոր մտքերը:
  Խաղերի ժամանակ սովորողները
- ինքնարտահայտվում են
- աշխույժ են
- ստեղծագործ են

	• օգնում են միմյանց • աշխատում են համախմբված և այլն • շատ խմբային աշխատանքների ժամանակ ուսուցիչը դառնում է որպես խորհրդատու և ուղղակի ղեկավարում է գործընթացը: Նման դեպքերում ուսուցիչը պետք է մատչելի բացատրի կատարվելիք աշխատանքը, պետք է նշի աշխատանքի գլխավոր նպատակներն ու խնդիրները, իսկ տարաձայնությունների ժամանակ օգնում է լուծել դրանք: Կան այլ փոխներգործուն մեթոդներ ևս և դրանց տեղին և գրագետ օգտագործումը ուսուցչի կողմից օգնում է դասապրոցեսը ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնելուն, որոնց արդյունքում էլ ձևավորվում եմ մի շարք կարողություններ, հմտություններ, գիտելիք: Արդյունքում նաև սովորողները դառնում են ավելի նախաձեռնող, ինքնուրույն, ստեղծագործ և այլն:
Հետազոտության ընթացքը	Հետազոտական աշխատանքը կատարվեց 04.09.2023-14.09.2023 ընկած ժամանակահատվածում, քաղաք Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոցի 8-րդ դասարանում Հասարակագիտություն առարկայի շրջանակներում: Հետազոտական աշխատանքի թեմա էր ընտրվել«Փոխներգործուն մեթոդների կիրառումը 8-րդ դասարանում«Մարդը և շրջակա

	աշխարը» թեմայի շրջանակներում»: Հետազոտական աշխատանքը կատարվել է հիմնված լինելով թեմատիկ պլանավորում և առաջնորդվելով չափորոշչային պահանջներով: Փոխներգործուն մեթոդների կիրառմամբ օրինակելի դասի նմուշ-օրինակ Հասարակագիտություն առարկայից: Դասարան –VIII Թեմա- Մարդը և շրջակա աշխարհը: Դասի նպատակն ու խնդիրները. Սովորողը պետք է ` ● ներկայացնի մարդու, բնության,հասարակության փոխկապվածությունը: ● բացատրի մարդու պահանջմունքները ● առաջարկի մարդու կողմից բնությանը հասցրված վնասների կանխմանը ուղղված քայլեր Վերջնարդյունք- 7.1.1 հիմնավորի բնության անհրա-ժեշտությունը մարդու և հասարակության կյանքում: 7.1.2 Նկարագրի մարդու պահանջմունքները: 7.1.3 Առաջարկի բնության և հասարակության ներ-դաշնակության խախտումը կանխող քայլեր: Մեթոդներ, հնարներ- Մտագրոհ, բանավեճ, հարց ու պատասխան, զրույց, հարցաթերթ,պաստառի պատրաստում , տեսանյութի դիտում: Պարագաներ- դասագիրք, տետր գրատախտակ թուղթ,մարկերներ, կպչուն թերթեր, համակարգիչ : Դասը սկսվում է հարցադրումներով, օրինակ՝

	o ո՞րն է առհասարակ մարդու կոչումը: o ի՞նչ հատկանիշներ ունի մարդը: o ի՞նչ հատկանիշներով են մարդիկ և կենդանիները միմյանցից տարբերվում, և ի՞նչ հատկանիշներով են նման: o ի՞նչ կապ կա մարդու և բնության միջև և այլն: Կատարել նաև քննարկում խմբային աշխատանքի միջոցով. դասարանը բաժանել 3 խմբի և յուրաքանչյուր խմբի հանձնարարել՝ 1. մարդը բանական էակ է 2. մարդը նույն «ցեղից» է, ինչ և մյուս կենդանի արարածները 3. մարդը հասարակական էակ է Խմբերը կատարում են քննարկում և հայտնում իրենց կարծիքները: Բանավեճի փուլում կատարել քննարկում՝ «հնարավո՞ր է արդյոք կանխել կամ նվազեցնել մարդու գործունեության հետևանքով բնությանը հասցվող վնասները թեմայի շուրջ»: Բանավեճից հետո կատարել արդյունքների ամփոփում Պատրաստել պաստառ, որտեղ կերևա մարդու հասցրած վնասը բնությանը: Պաստառի պատրաստման աշխատանքներին մասնակցում են դասարանի բոլոր աշակերտները: Պատրաստելիս պետք է օգտագործեն գունավոր մարկերներ, ներկեր, մատիտներ, կպչուն թերթիկներ: Դիտել նաև տեսանյութ, որտեղ երևում է մարդու հասցրած վնասը բնությանը, ինչպես նաև դիտել «Մաուգլի» մուլտֆիլմից մի փոքր հատվածը, որտեղ պարզ արտահայտվում է այն գաղափարը, որ մարդը հասարակական էակ է:

	Անդրադարձի փուլում սովորողներին տրամադրել հարցաթերթիկներ. Ի՞նչ նոր բան իմացա Ի՞նչ նոր բան կարողացա անել Ի՞նչ դժվարությունների հանդիպեցի, Դասապրոցեսին ո՞ր հատվածն էր ավելի հետաքրքիր: Դասի ավարտին կատարել և՛ միավորային, և՛ ձևավորող գնահատում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Ներկա ժամանակներում մանկավարժական գիտության մեջ տեղի են ունենում մեծ փոփոխություններ, որոնք նպատակ ունեն զարգացնելու կրթությունը: Նման պայմաններում ուսուցիչները պետք է լինեն իրազեկ և քայլեն ժամանակի

	պահանջներին համահունչ: Ուսուցումը ավելի արդյունավետ և հետաքրքիր է դառնում, երբ ավանդական դասերին զուգահեռ օգտագործվում են փոխներգործուն մեթոդներ: 2023 թ. ի սեպտեմբերի4-14 ընկած ժամանակահատվածում ք. Սպիտակի Վարդանանց համար 4 հիմնական դպրոցի Հասարակագիտության ուսուցչուհի Հ. Այվազյանը կատարել է հետազոտական աշխատանք «Փոխներգործուն մեթոդների կիրառումը 8-րդ դասարանում« Մարդը և շրջակա աշխարհը» թեմայի շրջանակներում»: Հետազոտության կարևորագույն նպատակներից էր հասնել հետազոտական հարցի«Արդո՞ք կիրառելի և արդյունավետ միջոցներ են փոխներգործուն մեթոդները, Հասարակագիտություն առարկայի շրջանակներում, 8 րդ դասարանի օրինակը» պատասխանին: Այս և մի շարք հարցերի պատասխաններ գտնելու համար մշակվեցին հատուկ պլաններ և աշխատանքը կատարվեց հստակ ձևաչափեչով: Արդյունքում կատարվեցին մի շարք եզրակացություններ և առաջարկություններ, որ՝ ● հասարակագիտություն առարկան անչափ բազմաբովանդակ առարկա է և օգնում է սովորողին առավել գիտակցել իր հասարակական էակ լինելու գաղափարը: ● առարկայի շրջանակներում սովորողը ստանում է այնպիսի գիտելիք, որը

	նպաստում է նրա կողմից քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձեւավորմանը: ● փոխներգործուն մեթոդների կիրառումը դասապրոցեսը դարձնում էավելի արդյունավետ և հետաքրքիր: ● նախապես պետք է պլանավորել դասի ընթացքը ելնելով չափորոշչային պահանջներից: ● փոխներգործուն մեթոդների կիրառումը առավել արդյունավետ է դառնում, երբ դրանք կիրառվում են ավանդական դասերին զուգահեռ: ● փոխներգործուն մեթոդները զարգացնում են մի շարք կարողություններ՝ սովորել սովորելու, ինքնաճանաչողական, մշակութային և այլն: ● փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունքում սովորողները դառնում են ինքնուրույն,ստեղծագործող, նախաձեռնող և այլն: ● մեթոդի բովանդակությունը նախապես պետք է սովորողին ներկայացվի մատչելի տարբերակով: ● մեթոդները կիրառելիս պետք է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, նախասիրությունները, միջոցները և այլն:

	• դասապրոցեսի ընթացքում մի քանի մեթոդի կիրառումը այդքան էլ արդյունավետ չէ և խլում է շատ ժամանակ: • փոխներգործուն մեթոդները կիրառելիս սովորողները ավելի աշխույժ են դառնում և երբեմն առաջանում է աղմուկ: Սույն հետազոտական աշխատանքի վերջնարդյունքը եղավ այն, որ ուսուցիչը ձեռք բերեց փորձ, գիտելիք, հմտություններ, կարողություններ:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., Հասարակագիտություն, ուսուցչի ձեռնարկ, VIII-IX դասարաններ, Երևան, Զանգակ հրատ., 2013թ.:

2. Հայկ Պետրոսյան «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012 թ.

3. Սիսյան Ս., Բաբայան Հ., Աղուզումցյան Գ., բարձրագույն դպրոցի մանկավարժության ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե.2015թ.

4. Ուսուցման արդյունավետ հնարներ -Սերոբ Խաչատրյան

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	